Արձակ, Պատմվածք

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԽԵՆԹԸ

(Մի խելոքի հիշատակարանից)

I

Վաղուց էի կասկածում, որ նա խենթ պիտի եղած լիներ: Մանկությունից նրա մեջ ինչ-որ այլանդակ բաներ էին անցնում: Դրացի էինք և փոքր հասակում խաղում էինք միմյանց հետ: Շատ չարն էր. երբեք հանգիստ նստել չգիտեր, գոհունակություն ասած բանը չէր ճանաչում: Ամենայն ուժով, մտքի ամբողջ կենտրոնացումով կձգտեր մի բանի. գլուխը կկոտրեր, որ այդ ուզած բանին հասնի և երբ նրա տերը լիներ, իսկույն կսկսեր տխրել:

— Իսկ այն կողմն ի՞նչ կա,— կհարցներ միշտ:

Ես երբեք չհասկացա նրան:

Աշխույժ էր և կրակոտ. այնպես անհամբեր, որ աստված ազատի: Բանն այն է, որ յուր տան մեջ էլ նրան չէին սիրում, որովհետև ոչ մի անկյուն չէր թողնիլ, որ ծածուկ մնար իրան: Հետաքրքիր էր, ոչ մի արգելքի առաջ կանգ առնել չգիտեր. կոտրում էր կողպեքներ, դռներ և ինչ որ ուզում էր տեսնել, տեսնում էր, հետո էլ գնում ծնողների մոտ և պարծենալով ասում, որ տեսել է ամեն ինչ:

Հենց որ մի բարձր տեղ, մի բարձր ծառ, մի տանիք տեսներ, կկպչեր մեր օձիքից, որ բարձրանանք այնտեղ: Դա յուր մեծ ախտն էր: Անպիտա՛նը վախ ասած բանը չուներ. կապիկի պես բարձրանում էր եկեղեցիների գմբեթների վրա... Մի խոսքով, ջղային դրության մեջ էր ընկնում, եթե տեսնում էր մի բարձր տեղ, ուր չէր բարձրացել ինքը: Ասացի, որ մեզ էլ էր ուզում քարշ տալ յուր ետնից: Վա՛յ էր, եթե վախ հայտնեինք և կամ չբարձրանայինք: Բոլորիս հետ կկռվեր. եթե ծեծ անգամ ուտեր՝ էլի կկռվեր, կնախատեր, վախկոտ կկոչեր...

Բանը նրանումն է, որ ծառի վրա մագլցել չգիտեր. «կապիկ խո չեմ կամ կատու»,— կասեր, հետո կերթար մի սանդուխ կգտներ, արյուն-քրտինք մտնելով քարշ կտար ծառի մոտ, կկռթնեցներ նրան և կբարձրանար:

Այդ բոլորը նրա ուժից վեր էին, բայց նա անում էր զարմանալի հարատևությամբ: Քրտինքն աղբյուրի պես հոսում էր երեսն ի վար, աչքերը մեծանում էին, քունքի երակները ուռում, բայց նա ձեռքից սանդուխը բաց թողնել չգիտեր: Քարշ էր տալիս յուր փոքրիկ ձեռներով. եթե հոգնում էր, կանգ էր առնում և սանդուխի կողքին նստում, քիչ շունչ առնելուց հետո նորից ելնում և չէր դադարում, մինչև որ ծառի ծայրը չբարձրանար:

Երբ հասնում էր ծայրին, ընտրում էր ամենաբարձր ճյուղը, չէր էլ վախենում, որ կոտրվի, գնում էր դեպի նա, հեծնում և ժամերով զմայլմամբ բարձրերը դիտում: Պատահում էր, որ նրան չարչարելու համար, սանդուխը ետ էինք քաշում և ցած ձգում, երբ նա ծառի վրա էր: Չէր հուզվում. ուսերն էր թոթովում, արհամարհաբար ժպտում ու շարունակում հիացումով հորիզոնը դիտել:

Խենթ էր, աստված վկա, հենց մանկությունից սկսած խենթ էր նա:

Ծնողները միշտ ծեծում էին նրան այդ բարձրանալու ախտի համար: Հիշում եմ, որ մի անգամ էլ ծառի կեսիցը ցած գլորվեց և երկու շաբաթ անդամալույծի պես պառկեց:

Բայց երբ լավացավ, յուր առաջին գործն էր նույն ծառը բարձրանալ. և մինչև որ նրա ծայրին չհասավ, ձեռք չքաշեց նրանից:

Մեր տան կողքից սկսած բարձրանում էր մի լեռ: Շատ բարձր չէր այդ լեռը. ավելի մի մեծ բլրակ էր և բավական հեշտ վրան ելնելու: Գագաթին ուներ մի ժայռ: Եթե Հայկը՝ այդպես էր նրա անունը, կորսված լիներ, պետք էր այդ ապառաժի վրա փնտրել նրան: Պառկում էր նա այնտեղ և դեմքը երկնքին՝ դիտում անհունությունը:

Հիշում եմ, որ մի անգամ հայրը բարկացած գնաց ինձ հետ նրա ետևից և ականջները սաստիկ ոլորեց: Հայկը ասես լա՛ց եղավ. երբեք. այլ երբ հայրը մի քանի նախատինքներ տեղալուց հետո ձեռքիցը բռնած իջնում էր՝ հարցրեց.

— Հայրիկ, այն ամպերից հետո ի՞նչ կա...

Միասին էր, որ ուսումնարան մտանք: Ուսումնարանում էլ նա նույն խենթը մնաց:

Այնպիսի դժվար, անհասկանալի հարցումներ էր տալիս վարժապետներին, որ նրանք համբերությունից դուրս էին գալիս և երբեմն էլ սաստիկ պատժում նրան: Դասերը սովորելու մեջ շատ ընդունակ էր, միայն թե ոտանավորները չէր սիրում սերտել:

Հակառակի պես էլ մի վարժապետ ունեինք, որ անդադար ոտանավորներ էր անգիր անել տալիս և եթե բան է, չգիտենայինք, ամեն մի չգիտցած տողի համար մի-մի քանոնի հարված էր խփում ձեռքներիս: Հիշում եմ, որ ամենից շատ հարվածը Հայկն էր ստանում: Բայց երբ ձեռքերը լավ կարմրում էին, չէր էլ լաց լինում, նայում էր ուսուցչին և բարկացած ասում.

— Ոտանավորներ չեմ ուզում:

— Ինչպե՜ս թե չես ուզում, անպիտան,— գոռում էր ուսուցիչը,— քո կամքո՞վն է:

— Սովորողը ես չե՞մ,— տրամաբանում էր Հայկը,— ինչքան կուզեք՝ ծեծեք, չեմ սովորիլ:

— Ինչո՞ւ, ախր, մի՞թե դժվար է միտը պահել:

— Գժվա՞ր...— հեգնում էր Հայկը,— մի քանի րոպեի մեջ կսովորեմ. բայց... չեմ ուզում, շատ սեղմված բան է երևում ինձ:

Եվ իսկապես շատ հետո էլ, երբ նա մեծացավ, համալսարանից վերադարձավ, ատում էր ոտանավորներն ընդհանրապես և նրանց համար ասում էր թե՝ «ինչո՞ւ են աշխատում սեղմել միտքն ու զգացմունքները չափի և սահմանի մեջ...»: Զմայլմամբ էր կարդում միայն մի քանի բանաստեղծների, մանավանդ Վիկտոր Հյուգոյին և Բայրոնին:

— Բարձր են դրանք...— ասում էր նա:

Միշտ բարձրության ձգտելու այդ ախտն էր, որ մեծանում էր իմ խեղճ Հայկի մեջ և խենթացնում նրան:

2

Այդպես, երբ տարրական դպրոցը վերջացրեց, նրա ծնողները հեռացան մեր քաղաքից. այնքան հեռու, որ երկար տարիներ չտեսա Հայկին և չլսեցի էլ նրա մասին:

Անցան տասնյակ տարիներ: Ես շատ բան տեսա, շատ ման եկա: Գործերս հաջող գնացին, մի լավ պաշտոն գտա և, էհ, աստծու տվածից մի քիչ էլ հարստություն դիզեցի:

Բայց Հայկին մոռացա: Քսաննյոթ տարեկան էի և գործերս փայլուն դրության մեջ դրած, հանգիստ կյանք էի վարում, երբ հանկարծ հանդիպեցի նրան:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր զբաղվում... վարժապետությունով: Ֆուհ... տարիներով տանջվել այնպես, ինչպես նա էր տանջվել, ինձ պատմեց բոլորը, գնալ մուրացկանությունով բարձրագույն կրթություն ստանալ և ապա՝ ուսուցի՞չ...

Միշտ նույն խենթն էր մնացել: Երբ հանդիպեցի նրան, մոռացել էի նրա բարձրության ձգտելու ախտը: Խնդրեցի, որ ինձ մոտ գա: Երկար խոսեցինք, փոխվել էր խեղճը. զգալի կերպով դեպի գերեզման էր գնում: Ես լսել եմ, որ խենթերը ամենից ավելի ծյուրախտ են ստանում: Կարծում եմ, որ նա էլ ծյուրախտ պիտի ունենար: Աչքերը նույն երազող, խոր, և բոցավառ արտահայտությունն ունեին: Բայց այնքան էլ դեռ գիժ չէր, մաքուր էր հագնվում և շատ քաղաքավարի էր բոլորի հետ: Այդտեղ իսկ նա յուր խենթությունն էր ցույց տալիս: Եթե, բան է, անցնելու ժամանակ մի բեռնակրի անգամ դիպչեր, գլխարկը կհաներ և ներողություն կխնդրեր:

Բավական մտերմացավ. գալիս-գնում էր ինձ մոտ հաճախ, լսում էր ինձ մոտ եկող մյուս հյուրերի խոսակցությունը, երբեմն խառնվում էր և վիճաբանում, բայց երբ տաքանում էր, աստված ազատի, այնպիսի այլանդակ, անսովոր, յուր ասելովը՝ «բարձր» բայց պարզապես ծիծաղելի գաղափարներ էր հայտնում, որ հյուրերս միմյանց երեսին էին նայում և լուռ մնում. մինչև իսկ մեկը մի օր ասաց.

— Ախպեր, էս գժին ինչպե՞ս ես տուն թողնում:

Գիժ էր, այո, Հայկը, դրան խոսք չկար, բայց ճշմարիտ ասած, լավ, անվնաս տղա էր: Նրա ասածները միայն ծիծաղ էին շարժում: Երբեմն, իհարկե, վիրավորում էին պատվավոր մարդկանց, բայց երբ վերջիններս տեսնում էին, որ Հայկը խենթ է, ներում էին նրան:

Միշտ տխուր էր նա. շատ քիչ էր ծիծաղում և անդադար երազում էր:

Մի օր էլ, երբ միասին զբոսնում էինք դաշտում, ասաց.

— Էհ, եղբայր, այս ի՞նչ ցած ու նեղ տեղերի վրա ենք բնակվում կամ զբոսնում. մի՞թե ազատ բարձրություններ չկան այս երկրում:

Ա՜հ, բարձրություն... Ահա նորից Հայկիս խենթությունը բռնեց:

— Էլի նույն խենթն ես,— դիտեցի ես:

— Խե՞նթ,— գոչեց նա,— բարձրություն, ազատություն սիրելը խենթությո՞ւն է:

— Իհարկե, եղբայր, քանի որ եղած տեղումդ, եղածդ դրության մեջ հանգիստ ես, ոչ ոք չէ վնասում քեզ, ինչո՞ւ իզուր գնալ բարձրերում, նեղություն քաշել, հոգնել, վտանգների ենթարկվել...

Ժպտեց և չպատասխանեց:

— Բարձր տեղ ես ուզում,— հեգնեցի ես,— ահա արեգակը, բարձրացիր այնտեղ։

— Շատ կուզեի՛…— պատասխանեց լրջությամբ,— բայց… արեգակը շատ ցածր է դեռ։

— Արեգակը ցածր է… ինչե՞ր ես դուրս տալիս, եղբայր, մի՞թե արեգակից բարձր բան կա։

— Ինչո՞ւ չէ,— ասաց նա,— միլիոնավորներ կան.

— Ինչե՛ր, օրինակ։

— Զանազան մեծությամբ երկրագնդեր, աշխարհներ, արեգակներ, որոնց մոտ մեր արեգակը մի փոշի է։

— Շատ լավ, ուրեմն,— հեգնեցի նորից,— բարձրացիր դրանցից մեկի վրա։

— Նրանք էլ ցածր են դեռ։

— Վա՜հ… մի՞թե էլի բարձր կա։

— Իհարկե… Քանի բարձրանաս, այնքան դեռ ցածր ես, դեռ էլի կա բարձրանալու։ Եվ այսպես միշտ դեպի վե՛ր, դեպի վե՛ր…

Նայեցի դեմքին։ Աչքերը այնպես երազուն էին և այնպես ոգևորված, որ հարկ համարեցի հանգստացնել նրան։

— Լա՛վ, լա՛վ,— ասացի,— թող քո ասածը լինի. գնա՛ դեպի վեր, միշտ դեպի վեր…

— Իսկ դո՞ւ,— հարցրեց նա հանկարծ ինձ դառնալով։

— Ե՞ս,— ասացի վախեցած,— չէ, եղբայր, իմ տեղս շատ լավ է. փառք աստծու, տունուտեղ ունիմ, տոկոսով էլ փող տված բանկում. ստամոքսս էլ հիվանդ չէ։ Դու կուզես գնա, իմ տեղս շատ հանգիստ է։

— Բայց այդպես ցա՜ծ…

— Ով որ ցած տեղերում ապրի,— վարդապետեցի ես,— նա ընդմիշտ ընկնելու վտանգից ազատ կլինի։

Լռեց և երեսը դարձրեց։ Քիչ հետո լսեցի, որ ասում էր տխրությամբ.

— Աստված իմ, որքա՜ն տխուր է մենակ լինելը…

3

Ինչպես որ տարօրինակ էր խենթը, այնպես էլ տարօրինակ կերպով անհետացավ։ Ականատես էի նրա կորսվելուն։

Մի օր, երբ մեր դաշտից սկսեցինք լեռները բարձրանալ, կանգ առինք առաջին բլրակի գլխին։ Հոգնել էի, ուզում էի վերադառնալ։ Բլրակից այն կողմ փռվում էր մի դաշտակ, որից հետո բարձրանում էին հսկա և բարձր լեռները։ Սկսելով բլուրներից, լեռնաշղթան հետզհետե յուր

ամենաբարձր գագաթով ամպերն էր գգվում և արևի ճառագայթներից յուր վրայի մշտական սպիտակությունը փողփողեցնում:

Հայկը երբ այդ տեսավ, հիացումից գժվեց, բռնեց թևիցս և ստիպում էր, որ գնանք «այնտեղ՝ բարձր»: Վազում էր նա, առաջ սլանում... իսկ ես գրեթե գլորվում էի, քարշ գալիս գետնի վրայով:

Այդպես նա քարշ տվավ ինձ մինչև լեռնաշղթայի ստորոտը: Այնտեղ ես մնացի ընկած:

— Թո՛ղ ինձ, եղբա՛յր,— ձայնեցի,— ի՞նչ ես ուզում ինձնից. ուզում ես բարձրանա՞լ. համեցեք, գնա՛ ուր որ կուզես և ինձ հանգիստ թող:

Ու գնաց, սլացավ դեպի վեր: Նստածս տեղից տեսնում էի, թե նա ինչպես հևալով, բայց նույն արագությամբ և խենթային կամակորությամբ բարձրանում էր:

Ո՞ւր էր գնում այդպես:

Շուտով արեգակն էլ ծածկվեց ամպերով և ստվեր ձգեց լեռնաշղթայի վրա: Շատ պարզ տեսնում էի խենթին: Նա գնում էր, երբեմն կանգ էր առնում շունչ քաշելու համար և ապա առաջ գնում, միշտ բարձրանում...

Հաճախ անտեսանելի էր դառնում:

Կարծում էի, թե գլորվել էր մի անդունդի մեջ: Բայց նա նորից երևան էր գալիս. և գնում էր անընդհատ: Սկսեցի կանչել:

— Դարձի՛ր, եղբայր,— գոչեցի,— ո՞ւր ես գնում. այդպիսի բարձրությունների վրա կմրսես, քաղցած կմնաս, մենակ կլինես:

Բայց նա գնում էր միշտ և առանց ետ իսկ նայելու: Մի անգամ նստեց մի ապառաժի վրա և ցած նայեց: Արևի մի աղոտ ճառագայթ, մի թխագույն ամպի պատռվածքից անցնելով, ողողում էր նրա դեմքը: Մազերը ծածանվում էր քամուց: Ձեռքը դեպի վեր, ինձ էր ցույց տալիս սպիտակափառ բարձրությունները: Կարծես հրավիրում էր գնալ, հետևել իրան:

Տեղիցս չշարժվեցի: Խե՞նթ էի:

Վերջապես վեր կացավ նորից, մի րոպե երևցրեց յուր երկար ստվերն ու ծածանվող մազերը, ապա քայլեց առաջ և հետզհետե հեռանալով՝ անհետացավ դեպի բարձրաբերձ գագաթները... Իմ ցածրությունից էլ չէի տեսնում նրան: Այդպես այլանդակորեն կորսվավ խենթը: Էլ չվերադարձավ նա: Իմ ծանոթներից և ընկերներից ոչ մեկը չէ տեսել նրան:

Հավաստի եմ, որ քաղցած պիտի մեռած լինի նա իր ձգտած փայլուն բարձրությունների վրա...

Խենթը:

———

Երբ այս պատմությունը սողունները կարդացին, գտան, որ «խելոքը» իրավունք ուներ, որ բարձրանալու փափագը կատարելապես խենթություն է, քանի որ գետնի երեսին և ցած տեղերում ապրելը ավելի հեշտ է և գիրացնող: